Թուրքիան հեռանո՞ւմ է Ռուսաստանից

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 09.02.2024թ.

Ռուս-թուրքական հարաբերությունների շուրջ ծավալվող իրադարձությունները կարող են վկայել, որ Անկարան, պատկերավոր ասած, «հավաքում է ճամպրուկները» Մոսկվայի հետ ոչ այնքան երկար, բայց բուռն «քաղաքական-տնտեսական սիրավեպից» հետո: ՌԴ-ում թուրքամետ վերլուծական շրջանակների ներկայացուցիչները սպասելիորեն կհերքեն այդ փաստը, սակայն հետագայում, ընդունելով դրա գոյությունը, կպնդեն, որ բաժանումը տեղի է ունեցել օբյեկտիվ պատճառներով և, որ ամենակարևորն է, անցել է «սահուն» և առանց աղմուկի: Սակայն դրանից էությունը չի փոխվի:

Թվում է, թե Անկարան արդեն ստացել է այն ամենը, ինչ կարող էր ստանալ Մոսկվայի հետ «սիրախաղից», ուստի և համարեց, որ ժամանակն է վերադառնալու հայրենի օջախ՝ ՆԱՏՕ-ի ընտանիք:

2023 թ. դեկտեմբերից, երբ ԱՄՆ-ի նախագահ Ջ. Բայդենը հրամանագիր ստորագրեց օտարերկրյա ընկերությունների նկատմամբ երկրորդական պատժամիջոցների մասին, թուրքական բանկերը՝ ԱՄՆ-ի գանձապետարանի (ֆինանսների նախարարություն) ճնշման ներքո, հաջորդաբար սկսեցին կասեցնել ռուսական ընկերություններից վճարումները և դադարեցնել գործարքները ռուսական բանկերի հետ: Ավելին, եթե ի սկզբանե Թուրքիայում փակվում էին միայն այն ռուսական ընկերությունների և բանկերի հաշիվները, որոնք այս կամ այն կերպ կասկածվում էին Ուկրաինայում ՌԴ ռազմական գործողություններին մասնակցելու մեջ, ապա 2024 թ. գործընթացը տարածվել է արդեն Թուրքիայում ներկայացված բոլոր ռուս իրավաբանական անձանց վրա: Բացի այդ, խնդիրներ կան նաև Թուրքիայում ռուսաստանյան «Միր» վճարային համակարգի աշխատանքի հետ կապված, որոնք սկսվել են դեռ 2022 թ. գարնանը և շարունակվում են մինչ օրս:

Այդպիսով, Անկարան, ուզենա, թե՝ ոչ, անուղղելի հարված է հասցնում Ռուսաստանի ֆինանսատնտեսական հատվածին, որը որոշ ժամանակ թուրքական բանկային համակարգն օգտագործում էր որպես «օդանցք»՝ արտաքին աշխարհի հետ իր ֆինանսական գործարքներն իրականացնելու միջոց:

Սակայն, Թուրքիայի և Ռուսաստանի միջև ֆինանսատնտեսական հարաբերությունների վատթարացման խնդիրները դրանով չեն ավարտվում. թուրքական խոշոր ընկերությունները նույնպես սկսեցին կրճատել իրենց բիզնեսը Ռուսաստանում: Այսպես, 2024 թ. փետրվարի 2-ին, հայտնի դարձավ ևս մեկ նման դեպք, երբ թուրքական շինարարական կապալառու *Ronesans Holding-ը*

հայտարարեց ռուսական շուկայից դուրս գալու մասին, որտեղ նա նավթագազային ոլորտի տասը խոշորագույն կապալառուներից մեկն էր: Այս ընկերությունը Ռուսաստանում հաստատվել է դեռ 1993 թ. և, այնուհետև, զգալիորեն ընդլայնել իր բիզնես շահերը Եվրոպայում և Ասիայում՝ հիմնականում ՌԴ-ում վաստակած կապիտալի շնորհիվ: Այժմ *Ronesans Holding*-ն այլևս հետաքրքրված չէ Ռուսաստանում պայմանագրեր կնքելով, այլ ձգտում է իր գործունեությունն ավելի ակտիվացնել մի կողմից Եվրոպայում, մյուս կողմից՝ Կենտրոնական Ասիայում (Ղազախստան և Թուրքմենստան), ինչը նույնպես մտորելու տեղիք է տալիս:

Պաշտոնական Մոսկվան դեռ հրապարակավ չի արձագանքել այս լուրերին, թեև տեղի ունեցողը չի կարող մտահոգություններ չառաջացնել: Կարելի է ենթադրել, որ Թուրքիա նախատեսվող այցի ժամանակ ՌԴ նախագահ Վ.Պուտինն իր թուրք գործընկերոջ հետ կկիսի իր մտահոգություններն այս հարցերի շուրջ, և վերջինս կփորձի Մոսկվայից «պոկել» հետագա զիջումներ՝ խոստանալով քննարկել այդ խնդիրները: Այնուամենայնիվ, Թուրքիայի գործողությունները ռազմավարական առումով դժվար թե հետայսու ընթանան ռուս-թուրքական ֆինանսատնտեսական միջավայրի բարելավման ուղղությամբ:

Ռուսաստանյան հանրության շրջանում Անկարայի և Մոսկվայի «սերտ» փոխգործակցությունը ավանդաբար մատուցվում էր որպես Ռուսաստանի դեմ կիրառված արևմտյան պատժամիջոցների հետևանքների մեղմացման երաշխավոր, մինչդեռ Թուրքիան իրեն ներկայացնում է՝ որպես Ռուսաստանի նկատմամբ իր «անկախ» ֆինանսատնտեսական քաղաքականությունը որոշող երկիր:

Սակայն, այդ հարաբերությունները, ինչպես երևում է, նույնիսկ կարճաժամկետ հեռանկարում ընդունակ չեն դիմանալու տարածաշրջանում և աշխարհում ուժային հիմնական կենտրոնների կողմից աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական հեգեմոնիայի համար ծավալված բուռն գործընթացների «քննությանը»: Ուստի, Թուրքիայի պահվածքը միանգամայն սպասելի էր: